

ԿԱՐԾԻՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի թիվ 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի թիվ 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի¹ վերաբերյալ նկատառումները հանգում են հետևյալին.

Նախագծի 1-ին հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ արտաշնչած օդի հետազոտության միջոցով վարորդի սթափության վիճակի գննության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում վարորդը կարող է պահանջել, որ իր սթափության վիճակը որոշվի նաև ՀՀ կառավարության 19.03.2009թ. թիվ 277-Ն որոշմամբ նախատեսված այլ եղանակով (մեթոդով): Սույն որոշման 1-ին հավելվածի 12-րդ կետով սահմանված է, որ գննություն կարող է իրականացվել *վարորդի արտաշնչած օդի, նրանից վերցված մեզի և (կամ) արյան հետազոտության* միջոցով:

Նախագծով սահմանված տվյալ կարգավորումը խնդրահարույց է այնքանով, որ վարորդին հնարավորություն է տրվում այլ եղանակով սթափության վիճակի գննություն կատարել միայն այն դեպքում, երբ վերջինս համաձայն չէ արտաշնչած օդի հետազոտության միջոցով սթափության վիճակի գննության արդյունքների հետ: Սակայն վարորդը, տարբեր պատճառներից ելնելով (օրինակ՝ շնչուղիների հիվանդության առկայության պատճառով), հնարավոր է ի սկզբանե ցանկություն հայտնի, որպեսզի իր սթափության վիճակը ստուգվի ոչ թե արտաշնչած օդի հետազոտության, այլ՝ մեզի կամ արյան միջոցով: Իսկ նշված դեպքերը Նախագծով կարգավորված չեն:

Մի շարք պետություններում տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ սթափության վիճակը ստուգելու ժամանակ վարորդին հնարավորություն է տրվում ի սկզբանե ընտրելու ստուգման իրականացման ձևը: Օրինակ՝ Ավստրիայի Հանրապետությունում ոստիկանության համապատասխան ծառայողը վարորդի սթափության վիճակի գննման նպատակով կարող է տեխնիկական միջոցով իրականացնել արտաշնչած օդի հետազոտություն: Միաժամանակ, հիմնավոր պատճառների ներկայացման դեպքում վարորդը կարող է հրաժարվել նման հետազոտությունից, որի պարագայում այլ եղանակով սթափության վիճակի ստուգում կանցնի բժշկական հաստատությունում²: Բացի այդ, Ավստրիայի Հանրապետության ներքին գործերի նախարարի հրամանով սահմանված է նաև արտաշնչած օդի

¹Այսուհետ՝ Նախագիծ

²Ավստրիայի Հանրապետության Ճանապարհային երթևեկության օրենսգիրք, պարագրաֆ 5
<https://www.ris.bka.gv.at/GeltendeFassung.wxe?Abfrage=Bundesnormen&Gesetzesnummer=10011336>

հետազոտության համար նախատեսված տեխնիկական սարքերի նկարագիրը, օգտագործման պայմանները և այլ անհրաժեշտ տվյալներ³:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծով նախատեսել վարորդի կողմից արտաշնչած օդի հետազոտության միջոցով սթափության վիճակը գննելուց հրաժարվելու դեպքում այլ եղանակներով այն ստուգելու հնարավորություն:

Միաժամանակ, Նախագծով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված չեն արտաշնչած օդի հետազոտության համար նախատեսված սարքերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ և նկարագրեր:

Առաջարկում ենք համապատասխան իրավական ակտով ամրագրել արտաշնչած օդի հետազոտության համար նախատեսված սարքերի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, այդ թվում՝ այդ սարքերի արտադրողի, տեսակի, տիպի, դրանց ընդհանուր նկարագրի, օգտագործման և պահման պայմանների/կարգի, չափման ընթացքում հնարավոր շեղումների և այլ առանձնահատկությունների վերաբերյալ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

³<https://www.ris.bka.gv.at/GeltendeFassung.wxe?Abfrage=Bundesnormen&Gesetzesnummer=20004442>